ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ
2010-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀՀ ԵՎ ԱՀ/ԼՂ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՓԱՍՏԵՐՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2021

Հեղինակներ՝ Արմինե Սադիկյան
Նազելի Մովսեսյան
Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Սույն տեղեկանքի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Ամփոփ նկարագրություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) ներկայացնում է 2010-2020 թթ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում զինծառայողների մահացության դեպքերով հարուցված քրեական գործերի ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ ուսումնասիրությունը։

Ուսումնասիրության նպատակով Կազմակերպությունը տվյալները հավաքագրել է պաշտոնական կառույցներին ուղղված տեղեկատվության հարցումների պատասխաններից, պաշտոնական աղբյուրների կայքէջերով հրապարակված հաղորդագրություններից, պաշտոնատար անձանց սոցիալական կայքէջերում տեղ գտած գրառումներից, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցներով տարածված տեղեկություններից։

Համաձայն ուսումնասիրության՝ 2010-2020 թթ. ընթացքում, ըստ վերոնշյալ տարբեր աղբյուրների, գրանցվել է **743 զինծառայողի** մահվան ելքով դեպք։ Նշված դեպքերում ներառված չէ 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում պատերազմական գործողությունների հետևանքով մահացության դեպքերի թիվը, քանի որ, ըստ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազություն՝ այդ տվյալները դեռեւս ամբողջական չեն, սակայն ներառված է 2016 թ.-ի ապրիլյան պատերազմական գործողությունների ընթացքում տեղի ունեցած դեպքերի թիվը:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից տրամադրված տվյալներով այդ թիվը կազմում է **681**, ընդ որում՝ նշված դեպքերից **առնվազն 115-ը** ՀՀ գլխավոր դատախազության կողմից համարվել են ծառայության հետ չկապված։ Նշված հանգամանքը, երբ հայտնի չէ ամբողջական տվյալ զինվորական ծառայության հետ չկապված մահվան դեպքերի վերաբերյալ, պայմանավորված է նրանով, որ ՀՀ գլխավոր դատախազության կողմից նշված դասակարգումը սկսել է կիրառվել 2017 թ.-ից։

Եթե 2010-2017 թթ. ՀՀ գլխավոր դատախազությունը զինված ուժերում մահացության դեպքերի մասին տվյալներ հրապարակելիս[1] հայտնել է միայն ծառայության հետ կապված դեպքերը, ապա 2018 - 2019 թթ. ՀՀ գլխավոր

[1] Զինված ուժերում զինծառայողների մահացության դեպքերի մասին ՀՀ գլխավոր դտախազության տվյալները հրապարակվում են վերջինիս կայքէջում՝ ՀՀ Ազգային ժողովին ուղղված հաղորդումներում՝
http://www.prosecutor.am/am/%D5%80%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-%D5%80%D5%80-%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%AB%D5%B6/

դատախազության կայքէջում հրապարակվել[2] են տվյալներ *«զինվորական ծառայության հետ չկապված»* դասակարգմամբ մահացության դեպքերի մասին:

Հատկանշական է, որ ՀՀ գլխավոր դատախազությունը ծառայության հետ չկապված դեպքերի մասին սկսել է հայտնել 2018 թ.-ին, երբ հաստատել է լրատվամիջոցների կողմից որոշ մահացության դեպքերի մասին տարածված տեղեկությունները: Արդյունքում 2018 թ.-ին, բացի ՀՀ ԱԺ-ին ներկայացվող ամենամյա հաղորդումներից, ՀՀ գլխավոր դատախազությունը առանձին տեղեկատվություն է տարածել նաև 2017 և 2018 թվականներին ծառայության հետ չկապված մահվան դեպքերի թվի մասին:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարությանը, ապա նշենք, որ վերջինս գրեթե չի հրապարակում տարեկան ամփոփ տվյալներ զինված ուժերում զինծառայողների մահացության դեպքերի վերաբերյալ:

Վերջին անգամ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մահվան դեպքերի թվին ու պատճառներին պաշտոնական անդրադարձ է եղել 2015 թ.-ին, երբ ՀՀ ՊՆ մամուլի խոսնակը իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է զինծառայողների մահվան ելքով դեպքերի թիվը՝ «հաշվի առնելով դաշտում հնչող տարատեսակ թվերը»[3]:

Մահացության դեպքերի մասին տեղեկությունները տարվա ընթացքում ևս ոչ միշտ են ներկայացվում ՀՀ ՊՆ պաշտոնական կայքէջում կամ պաշտոնատար անձանց՝ սոցիալական հարթակների էջերում: Կազմակերպության կողմից ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված՝ զինված ուժերում մահացության դեպքերի թվի, պատճառների և հանգամանքների վերաբերյալ տեղեկատվության հարցումներին հիմնականում տրվում է ոչ ամբողջական պատասխան, մասնավորապես՝ երբեմն տրամադրվում է մահացած զինծառայողների միայն թվի մասին տեղեկատվություն, երբեմն թվային տվյալը տրամադրվում է առանց մահացության պատճառները նշելու, երբեմն նաև ընդհանրապես տվյալ չի հաղորդվում՝ դրանք համարելով պետական և ծառայողական գաղտնիք:

Անհասկանալի է ՀՀ ՊՆ նման մոտեցումը տեղեկատվության տրամադրման հարցում, մասնավորապես, երբ 2020 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում ՀՀ ՊՆ-ն Կազմակերպության տեղեկատվության հարցմանն ի պատասխան տրամադրել է որոշ տվյալներ մահացած զինծառայողների վերաբերյալ, իսկ նույն թվականի երկրորդ

---

[2] 2018-http://www.prosecutor.am/am/mn/7347/, 2019 http://www.prosecutor.am/am/mn/7657/

[3] https://www.aravot.am/2016/01/20/649128/

կիսամյակի վերաբերյալ նմանատիպ տեղեկատվության տրամադրումը մերժել է «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքի, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով՝ *«...Տեղեկատվություն տնօրինողը...մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա... խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը...»:*

Հանրության համար զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկությունների անհասանելիությունը որևէ հիմնավորում չի կարող ունենալ, հատկապես երբ դրանք վերաբերում են մարդու այնպիսի իրավունքների խախտումներին, որոնք են կյանքի իրավունքն ու խոշտանգումներից զերծ մնալու բացարձակ իրավունքը: Եւ պաշտպանության նախարարությունը պետք է միատեսակ, իրավաչափ և կանխատեսելի մոտեցում ձևավորի նման տեղեկությունների տրամադրման հարցում՝ զերծ մնալով ժողովրդավարական պետության անվտանգային շահերի ապահովման տեսակետից անհամաչափ սահմանափակումներ կիրառելուց:

Աղյուսակ 1-ում ներկայացված է 2010-2020 թթ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերի զինծառայողների մահացության դեպքերի վիճակագրությունն՝ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի, ՀՀ գլխավոր դատախազության[4] և ՀՀ պաշտպանության նախարարության տվյալների:

[4] ՀՀ գլխավոր դատախազության տվյալները վերցված են ՀՀ ԱԺ-ին ներկայացվող ամենամյա հաղորդումներում տեղ գտած տեղեկատվությունից

Աղյուսակ 1. 2010-2020 թթ. ՀՀ և ԱՀՀԼՂ զինված ուժերի զինծառայողների մահացության դեպքերի թիվն ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի, ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ պաշտպանության նախարարության տվյալների

Տարեթիվ	ՀՀ պաշտպանության նախարարություն		ՀՀ գլխավոր դատախազություն		ՀՔԱ Վանաձորի գրասենյակ
	Ծառ. հետ կապված	Ծառ. հետ չկապված	Ծառ. հետ կապված	Ծառ. հետ չկապված	
2010	-		54		47
2011	36[5]		36		38
2012	-		36		50
2013	30		30		30
2014	45		44		46
2015	57[6]		57		78
2016	83[7]		140[8]		175
2017	75[9]		56[10]	20	66
2018	38	25	38	25	63
2019	18	29	20	29	50
2020	18[11]	13	55	41	100
Ընդամենը	**400**	**67**	**566**	**115**	**743**
	467		**681**		

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, պաշտոնական երկու աղբյուրների՝ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ գլխավոր դատախազության տվյալները բավականին տարբերվում են միմյանցից: Պատճառն, ինչպես արդեն նշվեց, պաշտպանության նախարարության կողմից հրապարակված պաշտոնական տվյալների բացակայությունն է, մասնավորապես՝ 2010 և 2012 թվականներին: Իսկ 2016 թ.-ին Կազմակերպությանը ՀՀ ՊՆ-ը տրամադրել է միայն հրադադարի ռեժիմի խախտման, այդ թվում նաև՝ ապրիլյան մարտերի հետևանքով մահացած զինծառայողների թվի մասին տեղեկատվություն:

Աղյուսակ 2-ում ներկայացված է 2010-2020 թթ. մահացած զինծառայողների թիվն ու պատճառներն՝ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի և ՀՀ գլխավոր դատախազության տվյալների: ՀՀ պաշտպանության նախարարության տվյալները այս աղյուսակում ներկայացված չեն, քանի որ առկա չեն ամբողջական տվյալներ:

[5] https://razm.info/1991
[6] http://www.aravot.am/2016/01/20/649128/
[7] ՀՀ ՊՆ կողմից ստացված գրությամբ տրամադրվել է միայն 2016 թ. հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով (այդ թվում նաև ապրիլի 2-11-ն ընկած ժամանակահատվածում) մահացության դեպքերի թիվը
[8] Ի պատասխան ՀՔԱՎ հարցմանը տրամատրվել է մահացության դեպքերի ընդհանուր թիվ՝ առանց մասնավորեցնելու յուրաքանչյուր դեպքի պատճառը
[9] http://www.prosecutor.am/am/mn/7347/ (Գլխավոր դատախազության 2017 թ. հաղորդման մեջ նշվել է 75 դեպք՝ հղում կատարելով ՀՀ ՊՆ-ից ստացված տվյալներին)
[10] http://www.prosecutor.am/am/mn/7347/ (Գլխավոր դատախազության 2017 թ. հաղորդման մեջ նշվել է 75 դեպք՝ հղում կատարելով ՀՀ ՊՆ-ից ստացված տվյալներին)
[11] ՀՀ ՊՆ տվյալը՝ ներառում է 2020 թ. հունվար-հունիս ամիսներին գրանցված մահացության դեպքերը, 2020 թ. 2-րդ կիսամյակի տվյալները Կազմակերպությանը չեն տրամատրվել

Աղյուսակ 2. 2010-2020 թթ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում զինծառայողների մահացությունների թիվն ու պատճառներն ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի և ՀՀ գլխավոր դատախազության տվյալների.

Տարեթիվ	Հրաժարվելի ռեժիմի խախտում	Ինքնասպանություն	Անվտ. կանոն. խախտում	Կանոնադրք. հար. խախտում	Մարտ. ծառ. կր. կանոն. պահ.	ՁՕԿ	Բռնադրանք/ Դիտավ. առ. ծանր վնաս .պատճ.,	Սպանություն[12]									Ավտոմեքար/ մեք. վար. կան. խախ.	Առոջական	Ականի պայթյուն	Անփույթ վերաբ. ծառ. նկ.	Նռնականետի արձ. արդյունք	Դժբախտ պատահար[13]	Թռիչքի կանոնների խախտում	Հայտն ի չէ	Լրացված/պատճ. հարցմ.ի չէ/	ՀՔԱՎ	Գլխ. դատ/ Զին. դատ[14]
								Մի խումբ անձանց կամ կազ. խմբի կողմից	Դիտավորյալ	Երկու և ավելի անձանց	Շատերի կյանքի համար վտանգ. եղ.	Խուլիգանական դրդումներով	Մարտ. ծառ. կր. կանոն. պահ.	Այլ հանցանքը թաքցնելու կամ դրա հետևանքով եղած	Անհայտ պայմաններ	Զենքի հետ վարվ. կան.խախ										ՀՔԱՎ Վանաձորի գրասենյակ / ՀՀ գլխավոր դատախազություն		Ընդամենը	
2010	9/11	4/6	2/0	1/0			1/1		6/12	10/0						1/4	1/6	6/9		1/0		2/5		3/0		47	54
2011	10/10	11/9					2/2		2/2		1/0					2/2	7/6	3/3	0/1			0/1				38	36
2012	12/13	12/9		1/0					3/2							1/1	11/7	6/3	1/1			3/0				50	36
2013	6/6	8/8							2/3		1/0	1/0	1/0			1/1	4/4	4/4	1/1			1/3				30	30
2014	26/26	3/3			1/0				2/2			1/0	1/0			2/1	3/1	3/4	2/2			1/3		1/2		46	44
2015	41/38	6/6			1/1			1/0	0/1				2/2				19/2	4/2	0/1	1/0	1/0	0/4		2/0		78	57
2016	111/չն	15/չն							3/չն.	2/չն			4/չն		1/չն	5/չն	11/չն.	2/չն	1/չն			7/չն			13/չն	175	140[15]
2017	23/23	10/10							3/4							5/4	8/9	8/16	4/4	1/0	1/0	3/6				66	76
2018	7/7	11/11							1/1				2/2			2/2	17/17	13/13	1/1			7/7	2/2			63	63
2019	4/4	10/10							2/2	2/2						1/1	16/15	13/13				2/2				50	49
2020	17/17	18/17			1/1	3/3			2/2			1/1		1/1			21/21	25/23	1/1			9/9		1/0		100	96
Ընդամենը	266/155	108/89	2/0	2/0	3/2	3/3	3/3	1/0	26/31	14/2	2/0	3/1	10/4	1/1	1/0	20/16	118/88	87/90	11/12	3/0	2/0	35/40	2/2	7/2	13/0	743	681

[12] Մարտական ծառայանություն կրելու կանոնների խախտման և զենքի հետ վարվելու կանոնների խախտման այն դեպքերը, որոնք գրանցվել են մահացած զինծառայողների ծառայակիցների կողմից, Կազմակերպության կողմից դասակարգվել են որպես «Սպանության» ենթադասակարգում

[13] «Դժբախտ պատահար» դասակարգման մեջ ներառված են **ջրահեղձման, ձնահոսքի, սողանքի, ծառի տապալման, հոսանքահարման, թունավորման (գազից, էթիլ սպիրտից), ձորը սայթաքելու, գայլի հարձակման, փլուզման, վրաերթի, մեղվի խայթոցի** հետևանքով դեպքերը, ինչպես նաև պաշտոնապես միայն **«դժբախտ պատահար»** դասակարգված դեպքերը, որոնց դեպքերում չի մասնավորեցվել դեպքերի հանգամանքները

[14] Գլխավոր դատախազության/ Զինվորական դատախազության տվյալները դեպքերի պատճառների մասին հիմնականում վերցված են ՀՀ ԱԺ-ին ներկայացվող ամենամյա հաղորդումներից, բացառությամբ 2018, 2019, 2020 թթ. դեպքերի, որոնց վերաբերյալ տվյալները Դատախազության կողմից տրամադրվել են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցումներին ի պատասխան

[15] ՀՔԱՎ հարցմանն ի պատասխան տրամադրվել է միայն թվային տվյալ՝ առանց դեպքերի պատճառների

ՀՀ գլխավոր դատախազության եւ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից տրամադրված տվյալները

ՀՀ գլխավոր դատախազության եւ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրվել են տեղեկություններ ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում զինծառայողների մահացության դեպքերի փաստով հարուցված քրեական գործերի, դրանց ընթացքի, դատաքննության փուլում գտնվող գործերի, ինչպես նաև կայացված դատավճիռների վերաբերյալ (տե՛ս աղյուսակ 3)։

Աղյուսակ 3. 2010-2020 թթ. զինծառայողների ծառայության հետ կապված մահացությունների միջադեպերի առթիվ հարուցված քրեական գործերի ընթացքը (ՀՀ գլխավոր դատախազության տվյալներ)

Տարեթիվ	Մահ. ընդ թիվ		Հարուցված քրեական գործերի վարույթները կասեցվել են	Հարուցված քրեական գործերի վարույթները կարճվել են	Նախաքննության փուլ	Կարճվելուց հետո վերսկսվել է	Կասեցվելուց հետո ուղարկվել է ՀՀ ՔԿ ՀԿԳՎ	Գործը քննում է ՀՀ ՔԿ ՀԿԳՎ	Հար. քր. գործի մասին տեղեկություն չեն հայտնել	Դատարան ուղարկված գործերի թիվ							Հարուցվ. քր. գործեր		Քր. գործի հարուց. մերժվ.	
	Ծառ. հետ կապված	Ծառ. հետ կապված								Մեղադրական դատավճիռ[16]	Արդարացման դատավճիռ	Վարույթը կասեցվել է	Վարույթը կարճվել է	Դատաքննության փուլ	Վճռարկի բողոքի քննություն. բեկանվելուց հետո	Դատավճիռ մասին չի տեղեկացվել	Կապված	Չկապված	Կապված	Չկապված
2010	54		8	8		1	1			15			1				**34**		**10**	
2011	36		11	7						14		1	1				**34**		**1**	
2012	36		10	5						13			1				**29**		**0**	
2013	30		7	7						12			1				**27**		**2**	
2014	44		21	7						7			1	1		1	**38**		**2**	
2015	57		28	7						7							**42**		**4**	
2016	140		88	15				1		19	1		1	3			**128**		**6**	
2017	56	20	26	6						8				5	1		**46**	**6**	**4**	**4**
2018	38	25	10		2					2				3			**17**			**12**
2019	20	29	4		6				5					5			**20**			**7**
2020	55	41	1	4	48												**53**	**8**	**1**	**8**
Ընդ.	**566**	**115**	**214**	**66**	**56**	**1**	**1**	**1**	**5**	**97**	**1**	**1**	**6**	**17**	**1**	**1**	**468**	**14**	**30**	**31**
Միջադեպերի թիվը																	**543**			

[16] Այն դեպքում, երբ 1 քրեական գործով ներգրավված են 1-ից ավելի մեղադրյալներ և եթե նրանցից առնվազն 1-ի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, այդ գործերի արդյունքը ներառված է «Մեղադրական դատավճիռ» ենթադասակարգման տակ

Համադրելով վերոնշյալ կառույցներից ստացված տվյալները՝ կարող ենք արձանագրել, որ 2010-2020 թթ. ընթացքում մահացած 681 անձանց (ծառայության հետ կապված **566 անձի** և չկապված **115 անձի**) մահվան դեպքերն արձանագրվել են **543 միջադեպի** արդյունքում: Ընդ որում՝ դրանցից

- **498** միջադեպ համարվել է զինվորական ծառայության հետ կապված,
- **45** միջադեպ՝ չկապված:

Մահվան ելքով **543 միջադեպից քրեական գործ է հարուցվել 482-ի (89 %-ի) փաստի հիման վրա:** Ընդ որում՝ նշված 482 միջադեպերից.

- **468-ը** (86 %) զինծառայության հետ կապված միջադեպեր են,
- **14-ը** (3 %-ը)՝ չկապված:

Իսկ **543 միջադեպից 61-ի (11 %-ի) փաստով քրեական գործի հարուցումը մերժվել է**: Ընդ որում՝ նշված 61 միջադեպերից.

- **30-ը** (6 %-ը) զինծառայության հետ կապված միջադեպեր են,
- **31-ը** (6 %-ը) չկապված:

Նշենք, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի հետևանքով մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ, ինչով և պայմանավորված է մահացած զինծառայողների և հարուցված քրեական գործերի թվերի միջև առկա տարբերությունը:

- **Ծառայության հետ կապված** մահվան դեպքերով հարուցված **468 քրեական գործերից**

  - **214-ով** քրեական գործերի վարույթները կասեցվել են,
  - **66-ով** քրեական գործերի վարույթները կարճվել են,
  - **56 գործ** գտնվում է նախաքննության փուլում,
  - **2** հարուցված քրեական գործն **ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի գլխավոր վարչություն**,
  - **1-ով** վարույթը կարճվելուց հետո վերսկսել է,
  - **5 գործի** ընթացքի մասին չի տեղեկացվել:
  - **124 գործ** ուղարկվել է դատարան, որոնցից
    - **97-ով** կայացվել է **մեղադրական** դատավճիռ,
    - **1-ով՝ արդարացման** դատավճիռ,

- **1 գործի** վարույթը դատաքննության ընթացքում **կասեցվել** է,
- **6 գործով** վարույթը **կարճվել** է
- **17 գործ** գտնվում է դատաքննության փուլում,
- **1 գործով** կայացված դատավճռի մասին չի տեղեկացվել,
- **1 գործ** ազատազրկման դատավճռի դեմ բողոք բերվելու արդյունքում **գտնվում է քննության ընթացքում**:

Ի դեպ, այն դեպքերը, երբ քրեական գործի շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավված են մեկից ավելի անձինք և նրանցից առնվազն մեկի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, ներառված են «կայացվել է **մեղադրական** դատավճիռ» ենթադասակարգման մեջ:

- **Ծառայության հետ չկապված** մահվան դեպքերով հարուցված **14 քրեական գործերից**

- **4-ով** քրեական գործերի վարույթները **կարճվել** են,
- **1-ով** վարույթը **կասեցվել** է,
- **8-ով նախաքննությունը** շարունակվում է,
- **1 գործ** ուղարկվել է դատարան, որի արդյունքում կայացվել է մեղադրական դատավճիռ:

Դիտարկենք 2010 - 2020 թվականներին զինծառայողների մահվան ելքով միջադեպերի թվի և դրանցով հարուցված ու մերժված քրեական գործերի թվի հարաբերակցությունը: Այսպես՝

- 2010 թվականին մահվան ելքով 44 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 34-ի փաստով (77 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 10 դեպքում (23 %),
- 2011 թվականի 35 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 34-ի փաստով (97 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 1 դեպքում (3 %),
- 2012 թվականի բոլոր 29 միջադեպերով հարուցվել է քրեական գործ (100 %-ով),
- 2013 թվականի 29 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 27-ի փաստով (93 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 2 դեպքում (7 %),
- 2014 թվականի 40 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 38-ի փաստով (95 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 2 դեպքում (5 %),
- 2015 թվականի 46 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 38-ի փաստով (91 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 8 դեպքում (9 %),
- 2016 թվականի 134 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 128-ի փաստով (96 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 6 դեպքում (4 %),
- 2017 թվականի 60 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 52-ի փաստով (87 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 8 դեպքում (13 %),
- 2018 թվականի 29 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 17-ի փաստով (59 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 12 դեպքում (41 %),
- 2019 թվականի 27 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 17-ի փաստով (74 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 10 դեպքում (26 %),
- 2020 թվականի 70 միջադեպերից քրեական գործ է հարուցվել 61-ի փաստով (87 %-ով), քրեական գործի հարուցումը մերժվել է 9 դեպքում (13 %):

Եթե առանձնացնենք զինծառայողների մահացության արդյունքում հարուցված և հետագայում վարույթը կարճված և կասեցված գործերի թիվը, կստանանք հետևյալ պատկերը. *(տե՛ս աղյուսակ 4):*

Աղյուսակ 4. 2010-2020 թթ. զինծառայողների ծառայության հետ կապված մահացությունների փաստերի առթիվ հարուցված և հետագայում կասեցված և կարճված քրեական գործերի թիվն ըստ տարիների (ՀՀ գլխավոր դատախազության տվյալներ)

Տարեթիվ	Մահ. ընդհ. թիվ		Հարուցված քրեական գործերի վարույթները կասեցվել են	Կասեցված գործերը %-ային արտահայտությամբ	Հարուցված քրեական գործերի վարույթները կարճվել են	կարճված գործերը %-ային արտահայտությամբ	Հարուցվ. քր. գործեր		Քր. գործի հարուց. մերժվ.	
	Ծառ. հետ կապված	Ծառ. հետ կապված					Կապված	Չկապված	Կապված	Չկապված
2010	54		8	18 %	8	18 %	34		10	
2011	36		11	31 %	7	20 %	34		1	
2012	36		10	34 %	5		29		0	
2013	30		7	24 %	7	24 %	27		2	
2014	44		21	53 %	7	18 %	38		2	
2015	57		28	61 %	7	15 %	42		4	
2016	140		88	66 %	15	11 %	128		6	
2017	56	20	26	43 %	6	10 %	46	6	4	4
2018	38	25	10	34 %			17			12
2019	20	29	4	15 %			20			7
2020	55	41	1	1 %	4	6 %	53	8	1	8
Ընդ.	**566**	**115**	**214**	**39 %**	**66**	**12 %**	**468**	**14**	**30**	**31**

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ 543 միջադեպի փաստերով հարուցված 468 քրեական գործերից.

- 214-ի վարույթները կասեցվել են, որը կազմում է ընդհանուր արձանագրված միջադեպերի 39%-ը և հարուցված քրեական գործերի 46 %-ը
- 66-ի վարույթները կարճվել են, որը կազմում է ընդհանուր արձանագրված միջադեպերի 12%-ը և հարուցված քրեական գործերի 14 %-ը։

Եթե առանձին դիտարկենք մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերի թիվը, ապա կունենանք աղյուսակ 5-ում ներկայացված հետևյալ պատկերը.

Աղյուսակ 5. 2010-2020 թթ. զինծառայողների ծառայության հետ կապված մահացությունների փաստերով հարուցված և հետագայում դատարան ուղարկված գործերի թիվն ըստ տարիների (ՀՀ գլխավոր դատախազության տվյալներ)

Տարե թիվ	Մահ. ընդհ. թիվ		Դատարան ուղարկված գործերի թիվ														Հարուցվ. քր. գործեր		Քր. գործի հարուց. մերժվ.	
	Ծառ. հետ կապված	Ծառ. հետ կապված	Մեղադրական դատավճիռ[17]	%	Արդարացման դատավճիռ	%	Վարույթը կասեցվել է	%	Վարույթը կարճվել է	%	Դատաքննության փուլ	%	Վճռաբեկ բողոքի քննություն. բեկանվելուց հետո	%	Դատավճռի մասին չի տեղեկացվել	%	Կապված	Չկապված	Կապված	Չկապված
2010	54		15	34 %					1	2%							34		10	
2011	36		14	40%			1	3%	1	3%							34		1	
2012	36		13	45					1	3%							29		0	
2013	30		12	41%					1	3%							27		2	
2014	44		7	18%					1	3%	1	3%			1	3%	38		2	
2015	57		7	15%													42		4	
2016	140		19	14%	1	1%			1	1%	3	2%					128		6	
2017	56	20	8	13%							5	8%	1	2%			46	6	4	4
2018	38	25	2	7%							3	10%					17			12
2019	20	29									5	19%					20			7
2020	55	41															53	8	1	8
Ընդ.	**566**	**115**	**97**	**18%**	**1**	**0,1%**	**1**	**0,1%**	**6**	**1%**	**17**	**3%**	**1**	**0,1%**	**1**	**0,1%**	**468**	**14**	**30**	**31**

[17] Այն դեպքում, երբ 1 քրեական գործով ներգրավված են 1-ից ավելի մեղադրյալներ և եթե նրանցից առնվազն 1-ի նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ, այդ գործերի արդյունքը ներառված է «Մեղադրական դատավճիռ» ենթադասակարգման տակ

Այսպիսով՝ 2010 - 2020 թվականներին զինծառայողների մահվան միջադեպերից 482-ով հարուցված քրեական գործերից միայն 124-ն (26%-ն) է ուղարկվել դատարան:

Նշված 124 գործերից.

- **97-ով** (78 %-ով) կայացվել է մեղադրական դատավճիռ: Նշենք, որ այն դեպքերում, երբ մեկ քրեական գործով ներգրավված մի քանի մեղադրյալներից առնվազն մեկի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ, նշված գործերը ներառված են *«Կայացվել է մեղադրական դատավճիռ»* ենթադասակարգման տակ:
- **17** գործ (14%) գտնվում է դատաքննության փուլում: Ընդ որում, դրանցից 1-ը՝ 2014 թվականից, 3-ը՝ 2016 թվականից, 5-ը՝ 2017 թվականից, 3-ը՝ 2018 թվականից, 5-ը՝ 2019 թվականից,
- **6** գործի (1 %) վարույթը կարճվել է,
- **1** գործով կայացվել է արդարացման դատավճիռ,
- **1** գործի վարույթը կասեցվել է,
- **1** գործ գտնվում է վճռաբեկ բողոքի քննության ընթացքում՝ բեկանվելուց հետո,
- **1** գործով դատավճռի մասին չի տեղեկացվել:

Ի դեպ՝ նշենք, որ 2019 թվականին արձանագրված մահվան դեպքերով հարուցված քրեական գործերից միայն 5-ն է ուղարկվել դատարան և այժմ գտնվում է դատաքննության փուլում:

Իսկ 2020 թվականին արձանագրված մահվան դեպքերով հարուցված քրեական գործերի թվում դատարան ուղարկված գործեր չկան:

2010 - 2020 թվականներին ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում արձանագրված զինծառայողների մահվան դեպքերով հարուցված քրեական գործերի ընթացքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ***Հավելված 1-ում:***

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

2010 - 2020 թվականներին ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում զինծառայողների մահվան դեպքերով հարուցված քրեական գործերի քննության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն

Քրեական գործերի վիճակն՝ ըստ տարիների

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2010 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2010 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **54** դեպքերով.

- **հարուցվել է 34 քրեական գործ**, որից
  - **8-ի** (հրադադարի ռեժիմի խախտում) **վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),
  - **1-ի** (սպանություն) մասով հարուցված քրեական գործի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («...հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ...»): Հետագայում, սակայն, 2016 թ.-ին նշված քրեական գործն **ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչություն**,
  - **8-ով** որոշումներ են կայացվել վարույթները **կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կամ 10-րդ («...անձը մահացել է...») կետերի հիմքով,
  - **1 գործ** (հիվանդության/առողջական խնդիրների հետևանքով) **2019 թ.-ի փետրվարի** դրությամբ գտնվում է **նախաքննության** փուլում: Նշված գործի վարույթը արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով մեկ անգամ կարճվելուց հետո **կրկին** վերսկսել է: Որպես մեղադրյալ ներգրավված անձ չկա:
  - **16 գործ** մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է **դատարան**, որոնցից.

- **15-ով կայացվել են մեղադրական դատավճիռներ**: Մեղադրական դատավճիռների արդյունքում 1 անձ դատապարտվել է ցմահ ազատազրկման, 31 անձ դատապարտվել է տարբեր ժամկետներով ազատազրկման, ընդ որում՝ նրանցից 1-ի նկատմամբ պատիժը չի կիրառվել՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի (...«պատիժը պայմանականորեն չկիրառել...»), իսկ 7-ն ազատվել են պատժի կրումից համաներման կիրառմամբ:
- **1-ով** դատարանի կողմից վարույթը **կարճվել** է **համաներման կիրառմամբ:**

10 գործով նախապատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կամ 10-րդ («...անձը մահացել է...») կետերի հիմքով:

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2011 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2011 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **36** դեպքերով.

- **հարուցվել է 34 քրեական գործ, որից**
  - **10-ի** (հրադադարի ռեժիմի խախտում) **վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),
  - **1-ի** (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ) մասով հարուցված քրեական գործի վարույթը **կասեցվել** է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («...հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ...»),

- **7-ով** որոշումներ են կայացվել վարույթները **կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կամ 10-րդ («...անձը մահացել է...») կետերի հիմքով,
- **16 գործ** մեղադրական եզրակացությամբ **ուղարկվել է դատարան**, որոնցից
  - **14-ով կայացվել են մեղադրական դատավճիռներ**, որոնց արդյունքում 1 անձ դատապարտվել է կալանքի և համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի (...«պատիժը պայմանականորեն չկիրառել...»)՝ պատիժը չի կիրառվել, 23 անձ դատապարտվել է տարբեր ժամկետներով ազատազրկման, ընդ որում՝ նրանցից 1-ի նկատմամբ պատիժը չի կիրառվել՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի, իսկ 2-ն ազատվել են պատժի կրումից համաներման կիրառմամբ։
  - **1-ով (**մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ) **դատարանի կողմից վարույթը կասեցվել** է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով («… մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ…») և ամբաստանյալի նկատմամբ դատարանի կողմից հայտարարվել է հետախուզում,
  - **1 գործով** (հիվանդության/ առողջական խնդիրների հետևանքով) **վարույթը կարճվել է դատարանի կողմից**՝ վաղեմության ժամկետն անցնելու պատճառով և քրեական հետապնդումը դադարեցվել է։

1 գործով նախապատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կետի հիմքով։

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ։

2012 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2012 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **36** դեպքերով

- **հարուցվել է 29 քրեական գործ, որից**
  - **10-ի** (հրադադարի ռեժիմի խախտում) **վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),
  - **5-ով** որոշումներ են կայացվել վարույթները **կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կամ 10-րդ («...անձը մահացել է...») կետերի հիմքով,
  - **14 գործ** մեղադրական եզրակացությամբ **ուղարկվել է դատարան**, որոնցից
    - **13-ով կայացվել է մեղադրական դատավճիռ,** որոնց արդյունքում 21 անձանց նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում տարբեր ժամկետներով, նրանցից 2-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի, իսկ 6-ը համաներմամբ ազատվել են պատժի կրումից: Նշված 13 գործերից մեկով բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում 1 անձի դատավճիռը թողնվել է ուժի մեջ (ազատազրկում), 2-ն արդարացվել են:
    - **1 գործով վարույթը կարճվել է դատարանի կողմից**՝ վաղեմության ժամկետն անցնելու պատճառով և քրեական հետապնդումը դադարեցվել է:

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2013 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2013 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **30** դեպքերով

- **հարուցվել է 27 քրեական գործ, որից.**
  - **6-ի** (հրադադարի ռեժիմի խախտում) **վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով

(«...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),

- **1-ի** (ինքնասպանություն) մասով հարուցված քրեական գործի **վարույթը կասեցվել** է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («...հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ...»),
- **7-ով** որոշումներ են կայացվել վարույթները **կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կամ 10-րդ («...անձը մահացել է...») կետերի հիմքով,
- **1** քրեական գործ (ինքնասպանություն) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ **բեկանվելուց** և ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարան ուղարկվելուց հետո **կարճվել է** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 10-րդ կետի՝ անձի մահանալու հիմքով:
- **12** գործով կայացվել են **մեղադրական դատավճիռներ**: Արդյունքում 20 անձանցից 19-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում տարբեր ժամկետներով, իսկ 1-ի նկատմամբ՝ կալանք: Ազատազրկման դատապարտված անձանցից 4-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի, իսկ 2-ը համաներմամբ ազատվել են պատժի կրումից:

2 գործով (հիվանդություն, առողջական խնդիրներ) նախապատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...») կետի հիմքով:

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2014 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2014 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **44** դեպքերով

- **հարուցվել է 38 քրեական գործ, որից.**

- **21-ի** (հրադադարի ռեժիմի խախտում) **վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),
- **7-ով** որոշումներ են կայացվել վարույթները **կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...») կամ 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կետերի հիմքով,
- **10 գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան**: Դրանցից
  - 1-ով **վարույթը կարճվել** է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ («...անձը մահացել է...») կետի հիմքով,
  - 7-ով **կայացվել են մաղադրական դատավճիռներ**:
  - 1 գործ գտնվում է դատաքննության փուլում
  - 1-ով կայացված դատավճռի մասին չի տեղեկացվել (հիվանդության կամ առողջական խնդիրների հետևանքով):[18]

Դատապարտված 16 անձանց նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում տարբեր ժամկետներով, որոնցից 10-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի:

2 գործով նախապատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...») կետի հիմքով:

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2015 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2015 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **57** դեպքերով

- **հարուցվել է 42 քրեական գործ, որից.**

[18] Նշված քրեական գործը 2019 թ. փետրվարի դրությամբ դեռևս քննության չէր առնվել: Տեղեկացվել է, որ 2019 թ. մարտին նշված գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից վճիռը թողնվել է անփոփոխ:

- **28-ի** (հրադադարի ռեժիմի խախտում) **վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...») և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («... հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ...»),
- **7-ով** որոշումներ են կայացվել **վարույթները կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կամ 10-րդ դդ («...անձը մահացել է...») կետերի հիմքով,
- **7-ը մեղադրական** եզրակացությամբ ուղարկվել են **դատարան**: Դատապարտված 11 անձանց նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում տարբեր ժամկետներով, որոնցից 4-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի, 1-ը համաներման կիրառմամբ ազատվել է պատժից, 2-ի նկատմամբ պատիժ է նշանակվել կարգապահական գումարտակում 3 ամիս ժամկետով պահելը, սակայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի: 1 անձ դատապարտվել է տուգանքի՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

4 գործով նախպատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...») կետի հիմքով:

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2016 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2016 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **140** դեպքերով

- **հարուցվել է 128 քրեական գործ, որից.**

- **88-ի** (հրադադարի ռեժիմի խախտում) **վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),
- **15-ով** որոշումներ են կայացվել **վարույթները կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կամ 10-րդ դդ («...անձը մահացել է...») կետերի հիմքով,
- **1-ով** (սպանություն) հարուցված քրեական գործ **ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի գլխավոր վարչություն**,
- **24-ը** մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է **դատարան, որից**:
  - **3-ը** գտնվում են **դատաքննության** փուլում: Նշվածներից 1-ի դեպքում հարուցվել է քրեական գործ ինքնասպանության հոդվածով, 1 դեպքում՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման, 1 դեպքում՝ զենքի օգտագործման կանոնների խախտման:
  - **1-ով** (ինքնասպանություն) **վարույթը կարճվել է վաղեմության ժամկետն անցնելու պատճառով**:
  - **1-ով** ամբաստանյալն **արդարացվել է** արարքում հանցակազմի բացակայության պատճառով:
  - **18 գործով** կայացված դատավճիռներով **ազատազրկման է դատապարտվել** 24 անձ, որոնցից 12-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի: Ի դեպ՝ նշված 12 անձանցից 2-ը դատապարտված են եղել 1 և 3 ամիս ժամկետներով կալանքի: Եվս 4 անձի նկատմամբ (3 գործի շրջանակներում) կիրառվել է համաներում 2020 թ.-ին: Իսկ նշված 18 գործերից մեկով (կանոնադրային հարաբերությունների խախտում, սպանություն՝ խուլիգանական դրդումներով), բացի ազատազրկման դատապարտված մեկ ամբաստանյալից, ևս մեկը արդարացվել է արարքի մեջ հանցակազմի բացակայության պատճառով:
  - **1 գործով** (մարտական հերթապահության կանոնների խախտում) ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարանի կայացրած դատավճռի դեմ մեղադրողի բերած վերաքննիչ բողոքը դեռևս քննության չի առնվել:

6 գործով նախապատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...») կետի հիմքով:

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2017 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2017 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **56** դեպքերով.

- **հարուցվել է 46 քրեական գործ, որից**
  - **26-ի վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»), (ինքնասպանություն) որոշումներ են կայացվել վարույթները **կասեցնելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...») կետի հիմքով,
  - **6-ով** որոշումներ են կայացվել վարույթները **կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 2-րդ («...արարքի մեջ հանցակազմ չկա...») կամ 10-րդ դդ («...անձը մահացել է...») կետերի հիմքով,
  - **5-ը** գտնվում են **դատաքննության** փուլում՝ Ընդհանուր իրավասության 1-ին ատյանի դատարաններում: Նշված քրեական գործերից 2-ը հարուցվել են սպանության հոդվածով, 2-ը՝ ինքնասպանության, 1-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման, 1-ը՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի,
  - **8-ով** դատարանների դատավճիռներով **ազատազրկման է դատապարտվել** 11 անձ, որոնցից 4-ի նկատմամբ կիրառվել է համաներում և նրանք ազատվել են պատժի կրումից, իսկ 2-ի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:
  - **1-ը** (զենքի հետ վարվելու կանոնների խախտում) ազատազրկման դատավճռի դեմ վերաքննիչ քրեական դատարանի դեմ ամբաստանյալի բերած վճռաբեկ բողոքի ընթացքը դեռևս լուծված չէ:

6 գործով նախապատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...») կետի հիմքով:

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2017 թ.-ին «ծառայության հետ չկապված» դասակարգված դեպքերի հետևանքով մահացության դեպքերի փաստով քրեական գործերի հարուցման և դրանց ընթացքի մասին

Ծառայության հետ չկապված դասակարգված **20 դեպքերից**

- **10-ով** վարույթն իրականացվել է **քաղաքացիական իրավապահ մարմինների** կողմից,
- **4-ով** որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը **մերժելու** մասին,

  Իսկ մյուս **6 դեպքերից**
- **4-ով** վարույթները **կարճվել** են,
- **1-ով** վարույթը **կասեցվել** է,
- **1-ով** մեկ անձ **դատապարտվել** է ազատազրկման:

2018 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2018 թ.-ին ծառայության հետ կապված մահացության **38** դեպքերով ***հարուցվել է***

- **17** ***քրեական գործ, որից***
  - **10 վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ («...բացակայում է հանցագործության դեպքը...»), 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),
  - **2 գործ** գտնվում է **նախաքննության** փուլում,
  - **3 գործ** գտնվում է **դատաքննության** փուլում՝ ընդհանուր իրավասության դատարանում:

- **2** գործով **կայացվել են մեղադրական դատավճիռներ**, ամբաստանյալները դատապարտվել են ազատազրկման՝ տարբեր ժամկետներով:

Զինծառայողների մահվան դեպքերի թվի և հարուցված կամ մերժված քրեական գործերի թվի անհամապատասխանությունը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում մեկ միջադեպի արդյունքում մահացած մի քանի զինծառայողների մահվան փաստերով հարուցվել է մեկ քրեական գործ:

2018 թ.-ին «ծառայության հետ չկապված» դասակարգված դեպքերի հետևանքով մահացության դեպքերի քրեական գործերի հարուցման և դրանց ընթացքի մասին

Ծառայության հետ չկապված դասակարգված **25 դեպքերից**

- **13-ով** վարույթն իրականացվել է **քաղաքացիական իրավապահ մարմինների** կողմից,
- **12 դեպքերով** որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը **մերժելու** մասին:

2019 թվական

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2019 թ-ին ծառայության հետ կապված մահացության **20** դեպքերով ***հարուցվել է***

- ***20 քրեական գործ, որից***
  - **4 գործի վարույթները կասեցվել** են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),
  - **6 գործ** գտնվում է **նախաքննության** փուլում,
  - **5 գործ** գտնվում է **դատաքննության** փուլում՝ ընդհանուր իրավասության դատարանում,
  - **5 գործի** ընթացքի մասին չի տեղեկացվել:

2019 թ.-ին «ծառայության հետ չկապված» դասակարգված դեպքերի հետևանքով մահացության դեպքերի քրեական գործերի հարուցման և դրանց ընթացքի մասին

Ծառայության հետ չկապված դասակարգված **29 դեպքերից**

- **22-ով** վարույթն իրականացվել է **քաղաքացիական իրավապահ մարմինների** կողմից,
- մյուս **7 դեպքերով** որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը **մերժելու** մասին:

2020 թվական (տվյալները՝ 2021 թ. փետրվարի 15-ի դրությամբ)

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության տվյալների՝ 2020 թ-ին ծառայության հետ կապված մահացության **55** դեպքերով

- ***հարուցվել է 53 քրեական գործ, որից***
  - **1** գործով **վարույթը կասեցվել** է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի («...գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթին...»),
  - **4-ով** որոշումներ են կայացվել վարույթները **կարճելու** մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («...բացակայում է հանցագործության դեպքը...»),
  - **48 գործ** գտնվում է **նախաքննության** փուլում:

1 գործով նախապատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին («...բացակայում է հանցագործության դեպքը...») կետի հիմքով**, 1 գործով** հայտնի չէ քննության ընթացքի մասին:

2020 թ.-ին «ծառայության հետ չկապված» դասակարգված դեպքերի հետևանքով մահացության դեպքերի քրեական գործերի հարուցման և դրանց ընթացքի մասին

Ծառայութան հետ չկապված դասակարգված **41 դեպքերից**

- **8-ով հարուցվել են քրեական գործեր,** որոնք գտնվում է **նախաքննության** փուլում,
- **8 գործով** նախապատրաստված նյութերի հիման վրա **որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին**,
- **25-ով** հայտնի չէ քննության ընթացքի մասին: Դրանցից 21-ով վարույթն իրականացվել է **քաղաքացիական իրավապահ մարմինների** կողմից:

Այսպիսով՝ ամփոփելով 2010-2020 թվականներին զինծառայողների մահվան փաստերով հարուցված 468 քրեական գործերի ընթացքի մասին ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվությունը, կարելի է արձանագրել, որ

- **56** քրեական գործ գտնվում է **նախաքննության** փուլում, որոնցից.
    - **2-ը** շարունակվում է 3 տարի (2018 թվականից),
    - **6-ը**՝ 2 տարի (2019 թվականից),
    - **48-ը՝** 1 տարի (2020 թվականից):
- Բացի դրանից՝ 2010 թ. ՀՀ քրեական օրենսգրքի 376 հոդվածի 1-ին մասով («Ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որն առաջացրել է էական վնաս») հարուցված և արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով կարճված մեկ քրեական գործի վարույթը 2016 թվականին **վերսկսվել է,** սակայն որպես մեղադրյալ ներգրավված անձ չկա: Փաստորեն նշված քրեական գործի քննությունը **շարունակվում է 11 տարի:**
- **Մեղադրական եզրակացությամբ** դատարան ուղարկված **124** գործերից **97**-ի քննության արդյունքում առնվազն **156** անձ դատապարտվել է ազատազրկման տարբեր ժամկետներով: Նշենք, որ ոչ բոլոր դեպքերում է Դատախազության կողմից նշվել պատասխանատվության ենթարկված անձանց թիվը: Վերոնշյալ անձանցից
    - **1**-ը դատապարտվել է **ցմահ** ազատազրկման,
    - **37-ի** նկատմամբ **պատիժը պայմանականորեն չի կիրառվել**՝ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի,
    - **24** հոգու նկատմամբ կիրառվել է **համաներում** և նրանք ազատվել են պատժի կրումից,
    - **1** անձ դատապարտվել է **տուգանքի**՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:
- Դատարան ուղարկված և դատաքննության փուլում վարույթը կարճված **6** գործերից.
    - **2-ի** վարույթը կարճվել է վաղեմության ժամկետն անցնելու պատճառով 2012 և 2016 թվականների մահվան դեպքեր).

      Ի դեպ, նշված գործերից մեկով (2012 թ. մահվան դեպք) ներգրավված են եղել երեք մեղադրյալ, որոնցից երկուսն արդարացվել են, իսկ մեկի նկատմամբ հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ, և ըստ այդմ՝ քրեական գործի վարույթը կարճվել է՝ 2020 թվականին:
    - **2-ի** վարույթը կարճվել է անձի (ամբաստանյալի) մահվան հիմքով (2013 և 2014 թթ.-ի մահվան դեպքեր),

- **1-ի** վերաքննիչ վարույթը կարճվել է 2021 թվականին՝ տուժողի իրավահաջորդի կողմից բերված վերաքննիչ բողոքը վերջինիս հետ վերցնելու հիմքով (2010 թ.-ի մահվան դեպք):
- **1-ի** վարույթը կարճվել է համաներման կիրառմամբ (2011 թ-ի մահվան դեպք):

❖ Արարքում հանցակազմի բացակայությանա հիմքով **արդարացվել** է 3 հոգի (2 տարբեր գործերի շրջանակներում): Նրանց նկատմամբ հարուցվել էր քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն առաջացրել է ծանր հետևանքներ»: Ընդ որում՝

- 1 գործով անցնող այլ մեղադրյալներ չկան:
- մյուս գործով բացի 2 արդարացվածները, 1անձի նկատմամբ հետապնդումը դադարեցվել է, և քրեական գործի վարույթը կարճվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ (2020 թվականին):